ների վրա։ Մի քանի հարիւր մարդ սպանեց, գիւղը աւարի տուեց ու քար ու քանդ եղաւ։

Ղայբալլիքենդի կոտորածից յետոյ, մօտակայ Կրկժան գիւղի հայ բնակիչները սպիտակ դրօշ բարձրացնելով՝ ուղևորուեցին Խանքենդ դիվիզիայի պետի մօտ՝ պաշտպանութիւն խնդրելու նպատակով։ Խանքենդից ուղարկուեց մի զօրամաս սպայի գլխաւորութեամբ, որը առաջարկեց հայ գիւղացիներին իրենց գոյքը յանձնել ի պահ հարևան Թուրքերին և տեղափոխուել Խանքենդ։ Այդպէս էլ արուեց, բայց Կրկժանը այնուամենայնիւ աւերուեց ու Թալանուեց յուլ.7-ին. բոլոր հայերի տները հրդեհուեցին զօրքերի աչքի առջև, զինուորական շտաբից մի վերստ հեռաւորութեան վրա։

Նոյն պայմաններում, զօրքի աչքի առջև, յաջորդ օրը, աւերուեց ու Թալանուեց և Փահլիւլ հայաբնակ գիւղը, որի աւերածութեան մասնակցեցին և ասկեարները։

Խանքենդից ոչ հեռու, իր կալուածում, Թուրք պահակների ներկայութեամբ սպանուեց Նատալիա Աթաբէգեանն ու իր աղախինը. դիակները կորան անհետ։

Թուրք ամբոխը, մասնակցութեամբ քրդական հեծելազօրի, յարձակուեց Դաշալթի գիւղի վրա, որը փրկուեց միայն անգլիացիների միջամտութեամբ։ Յարձակում եղաւ և Դաշքենդ գիւղի վրա, որի բնակիչները ցոյց տուին դիմադրութիւն։ Սուլթանովը պատժելու համար գիւղացիներին՝ զնդացիր ուղարկեց նրանց դէմ։

Ասկերանի կիրճի մօտի Նախիջևանիկ և ուրիշ հայ գիւղերը տառացի իմաստով դրուեցին պաշարողական վիճակի մէջ։ Գիւղական տների դէմ հանդիման կանգնեցուեցին կանոնաւոր զօրքեր, որոնք նեղում էին գիւղացիներին, Թալանում ու փչացնում նրանց այգիները, բռնութիւններ գործ դնում, կանանց յետևից ընկնում և հրացանաձգութեամբ վախի տակ պահում ամենքին։

Անզօր որև է իրական դարման հասցնելու, յունիս 12-ին մայոր Մաք Մեցենը անգլիական ներկայացուցչութեան և զինուորների հետ հեռացաւ Ղարաբաղից՝ տանելով իր հետ հայ ժողովրդի անսահման ատելութիւնը, որին այնպէս արժանի էր։ Սուլթանովի ձեռքերն այլևս բոլորովին ազատ էին։

Ղարաբաղի կոտորածները սաստիկ յուզում առաջ բերին Կովկասի հայութեան բոլոր խաւերում։ Առաջին արձագանքը լսուեց Էջմիածնից։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոր. Թոմսին ուղղեց հետևեալ հեռագիրը. «Մենք համոզուած ենք, որ դաշնակիցների հովանաւորութեան շնորհիւ մեր հօտի համար հասել է փրկութիւնը երկար տանջանքներից ու չարչարանքներից։ Բայց և այնպէս, Ղարաբաղում հոսում է անմեղ արիւնը կանանց, երեխաների և նրանց հերոսական պաշտպանների, որոնց ողբն ու աղաղակը հասնում է մինչև մեր պատրիարքական աթոռը։ Մենք չենք կարող մնալ անկարեկից դիտող կատարուող սարսափների և ձայն չբարձրացնել ի պաշտպանութիւն անմեղ զոհերի։ Այդ պատճառով դիմում ենք ձեզ, իբրև Մեծն Բրիտանիայի ներկայացուցչի և խնդրում պաշտպանել նոր բնաջնջման